Հաստատված է

Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի

հ/մ 5 նիստում

24-ը դեկտեմբերի 2020 թ.

_____

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՀԱԾՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2020

I. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Թվարկել և վերլուծել ֆակուլտետի գործունեությունը հաշվետու ժամանակահատվածում իր առաքելության և ռազմավարական պլանին համապատասխան:
Ֆակուլտետը հաշվետու ժամանակահատվածում իր գործունեությունը ծավալել է ֆակուլտետի խորհրդի աշխատանքային պլանի համաձայն (Տե՛ս՝ 2020 թվականի ֆակուլտետի խորհրդի աշխատանքային պլանը), որտեղ արտացոլված և քննարկվող հարցերը բխում են ՀՊՄՀ 2016-2020թ.թ. ռազմավարական ծրագրի և սկզբնական կրթության ֆակուլտետի ռազմավարական ծրագրի գործողությունների կատարման պլանից: Այսպես օրինակ. Ֆակուլտետը մշտապես իր ուշադրության կենտրոնում է պահել կրթության որակի բարելավմանն ուղղված հարցերը: Առավելապես այդ խնդիրը կարևորվում է այս ուսումնական տարվա ընթացքում՝ հեռավար կրթության պայմաններում: Հարց, որը համալսարանի ռազմավարական ծրագրի առաջին նպատակներից մեկն է: Այդ հարցերն առնչվում են մասնագիտական կրթական ծրագրերի մասնագիտական և բովանդակային վերափոխումներին, ընտրովի դասընթացների թիրախավորմանը, մանկավարժական պրակտիկաների թղթապանակների բովանդակության հստակեցմանն ու հարստացմանը, ամբիոնների գիտաուսումնական և հետազոտական արդյունքների փոխանցմանը ուսումնական գործընթաց, մանկավարժական նորագույն տեխնոլոգիաների և ինտերակտիվ մեթոդների կիրառմանն ուսուցման գործընթացում, դասախոսների և ուսանողների գործունեության մշտադիտարկմանը, վերջիններիս արդյունքների վերլուծության հիման վրա առաջարկությունների ձևակերպմանը և այլն (Տես՝ ամբիոնների, ֆակուլտետի խորհրդի նիստերի արձանագրություններ, դասալսումների գրանցումներ, պրակտիկայի մշտադիտարկումների հաշվետվություններ, ֆակուլտետի ռազմավարական ծրագրի ուղղություններ): Ռազմավարական ծրագրի գործողությունների պլանով նախատեսված աշխատանքների մեծ մասն հաշվետու տարվա ընթացքում իրականացվել են: Կատարված աշխատանքների վերաբերյալ ներկայացվել է հաշվետվություն: Ըստ ռազմավարական ծրագրի գործողությունների պլանի իրականացվել են հետևյալ աշխատանքները. • ուսումնասիրվել է ՈԱԾ-ի պահանջները, մշակվել են դասընթացներ, որոնք կապահովեն պահանջվող մասնագիտական կոմպետենցիաների ձևավորումը (մասնավորապես՝ ուսումնասիրությունների և հետազոտությունների արդյունքում փոփոխությունների է ենթարկվել <<Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն>> դասընթացը, մշակվել են նոր առարկաներ, որոնք նպաստելու են ուսանողների հետազոտական կարողությունների, մուլտիմեդիոն կոմպետենցիաների ձևավորմանը), • Իրականացվել են հետազոտություններ, որոնց արդյունքները ներդրվել են բուհի կրթական գործընթաց, նպաստելով կրթության որակի բարելավմանը: Մասնավորապես հետազոտություններ են կատարվել դպրոցներում ուսուցիչների և աշակերտների մեդիակրթության մակարդակի վերհանման նպատակով: Հետազոտության արդյունքում ստացված տվյալների հիման վրա Մանկավարժության ամբիոնի կողմից մշակվել է ընտրովի դասընթաց "Մեդիատեխնոլոգիաների կիրառումը տարրական դպրոցում" առարկան /ՄԿԾ 2-րդ կուրսի համար/: Արդյունքները կամփոփենք կիսամյակի վերջում: • Ուսումնական գործընթաց են ներմուծվել դասավանդման մեթոդներ, որոնք թույլ են տալիս մանկավարժական գործընթացը արդյունավետ կազմակերպել առցանց տարբերակով: Համապատասխան փոփոխություններ են կատարվել նաև առարկայական նկարագրերում, թեմաների դասավանդման մեթոդներն ու հաձնարարությունները

ադապտացվել են հեռավար կրթության ձևաչափին:

- ամբիոններում աշխատանքեր են իրականացվում բուհի մանկավարժական գործընթացում կիրառել սովորողների ինքնուրույնությունն ու ստեղծագործականությունն ապահովող մեթոդներ /տես՝ ամբիոնի նիստի արձանագրություններ/: Այդ աշխատանքները առավել հրատապ է դարձել այս ուսումնական տարվա ընթացքում՝ հեռավարի պայմաններում:
- Կապեր են հաստատվել նախադպրոցական հաստատությունների և դպրոցների հետ՝ միասնական ծրագրեր իրականացնելու, սեմինարներ կազմակերպելու, կատարված հետազոտությունների արդյունքները միասին քննարկելու և լուծումներ գտնելու նպատակով: Այս հանդիպումները ավանդական են դարձել, այս տարի իրակաացվել են հեռավար տարբերակով:
- Ֆակուլտետում ստեղծվել է որակի հարցերով զբաղվող խումբ, որն իրականացրել է որակի մշադիտարկման աշխատանքներ և ներկայացրել առաջարկությունները հեռավարի պայմաններում դասերն արդյունավետ կազմակերպելու վերաբերյալ:
- Դեռևս անցած տարի բուհում գործող էլեկտրոնային հարթակից արդյունավետ օգտվելու և որպես կրթական ռեսուրս օգտագործելու ծրագրեր են քննարկվել և ներդրվել: Այդ աշխատանքները ավելի խորացան և կիրառական դարձան այս տարի քովիդով պայմանավորված:
- Ֆակուլտետն պարբերաբար առցանց հարթակում կազմակերպել է սեմինարներ և վերապատրաստումներ մեդիատեխնոլոգիաների, դրանք դասավանդողների կողմից մանկավարժական գործընթացում արդյունավետ կիրառելու նպատակով: Այդ աշխատանքներում ներգրավվել են նաև ուսանողներ:

Նշված աշխատանքները ներառված էին ֆակուլտետի ռազմավարական ծրագրի 2019 թվականի գործողությունների պլանում: Այդ աշխատանքները, որոնք այս տարի իրականացված չեն, նախատեսված էին ռազմավարական ծրագրով՝ կտեղափոխվեն մյուս կիսամյակ:

Ֆակուլտետի ռազմավարական ծրագրի շուրջ աշխատանքներն իրականացվել են ամբիոնների դասախոսների ներգրավմամբ: Ռազմավարական ծրագրի գործողությունների պլանի մշակմանը ներգրավված են եղել ֆակուլտետի որակի ապահովման խմբի անդամները, ինչպես նաև ուսանողներ: Ռազմավարական ծրագրի գործողությունների պլանի մշակման աշխատանքներին ներգրավված ուսանողներն ու դասախոսները առաջնորդվել են դասախոսների և ուսանողների շրջանում կատարած բանավոր հարցումների հիման վրա:

Ռազմավարական ծրագրի գործողությունների պլանի հիմնական ուղղություններն ու դրանց շուրջ կատարվող աշխատանքները քննարկվել են ամբիոնների նիստերին (Տես՝ ամբիոնների նիստերի արձանագրություններ):

II. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Վերլուծել ֆակուլտետը հաշվետու տարում ֆակուլտետի կազմակերպական կառուցվածքի արդյունավետությունը՝ ըստ Պլանավորում, Իրականացում, Գնահատում, Բարելավում շրջափուլի: Խոսել ուսանողների, դասախոսների, գործատուների մասնակցության մասին:
Ֆակուլտետի խորհրդի նիստերում քննարկվող բոլոր հարցերին, որոշումների կայացմանը դասախոսները և ուսանողները տեղեկանում են խորհրդի կազմում ընդգրկված իրենց ներկայացուցիչների միջոցով (Տես՝ 2020-2021 ուսումնական տարվա ֆակուլտետի խորհրդի կազմը), ինչպես նաև իրենց հուզող հարցերը բարձրացվում են ամբիոնային նիստերի, ուսանողների

պարագայում՝ ուսանողական խորհրդի նիստերի ժամանակ, այնտեղից էլ՝ առաջարկությունների տեսքով՝ ֆակուլտետի խորհուրդ, ապա նաև համալսարանի համապատասխան կառույցներ: 2020 թվականի սկզբնական կրթության ֆակուլտետում տեղեկատվության արդյունավետ տարածման նպատակով ստեղծվել է ֆակուլկտետի բլոգը, ուր տեղադրվում են ուսանողների և դասախոսների համար անհրաժեշտ տեղեկատվություն, ուսումնական նյութեր և հետազոտական աշխատանքների արդյունքներ: Օգտագործվում են տեղեկատվության բոլոր հնարավոր եղանակները (Google classroom էլեկտրոնային կրթական հարթակ, համալսարանի կայքէջ, Facebook-յան էջեր, հեռուստացույց, հայտարարությունների տախտակ, ներքին գրություններ…) համալսարանական կյանքին և ֆակուլտետին առնչվող բոլոր տեղեկատվությունը դասախոսներին և ուսանողներին ժամանակին տրամադրելու համար:

Նշված ուսումնական տարվա ընթացքում քովիդի պանդեմիայով պայմանավորված առավել ակտիվ տեղեկատվություն է տրամադրվել ֆակուլտետի facebook-յան էջով: Յուրաքանչյուր երկուշաբթի ֆակուլտետի դեկանի կողմից շաբաթվա անելիքները հայտարարությամբ դրվել է ինչպես ֆակուլտետի facebook-յան էջում, ինչպես նաև ուղարկվել բոլորի էլեկտրոնային հասցեներին:

Կազմակերպվում են նաև ֆակուլտետի ընդլայնված նիստեր, որոնք անցկացվել են առցանց:

Առցանց տարբերակով ամեն օր դեկանատի կողմից իրականացվել է դասերի վերահսկողություն, կապ է հաստատվել ուսանողների հետ, ճշտվել առկա բացակայությունների պատճառները, դասերի իրականացման ընթացքը և այլն:

Ֆակուլտետի նպատակներն ու խնդիները պայմանավորված են ՀՊՄՀ ռազմավարական ծրագրի հիմնական ուղղություններով և սկզբնական կրթության ֆակուլտետի ռազմավարական ծրագրի գործողությունների կատարման պլանով: Այդ աշխատանքների ուղղությամբ տարվող աշխատանքները քննարկվում են ամբիոնների նիստերում, ինչպես նաև ֆակուլտետի խորհրդի նիստերում: Աշխատանքների արդյունավետությունը գնահատվում է հետադարձ կապի և մշտադիտարկումների միջոցով: Մշտադիտարկումների արդյունքները քննարկվում են ամբիոնային և ֆակուլտետի խորհրդի առցանց նիստերի ընթացքում, խնդրո առարկա հարցերի բարելավման ուղղությամբ արվում են առաջարկություններ (առաջարկությունները ներկայացվում են հաշվետվությունների և զեկույցների, ելույթների տեսքով), վերջիններս էլ ներկայացվում են համալսարանի համապատասխան կառույցներ, տեղադրվում Google classroom էլեկտրոնային կրթական հարթակում, կամ ուղարկվում աշխատակիցների էլեկտրոնային հասցեներին:

Այսպես օրինակ՝

- մանկավարժական պրակտիկաների կազմակերպումը. նախապատրաստական կազմակերպչական և բովանդակային սեմինար քննարկումներ ուսանողների, մեթոդիստների դպրոցների ներկայացուցիչների մասնակցությամբ,
- պրակտիկայի ընթացքում ուսանողների հետ առցանց քննարկում, ծագած խնդիրների վերհանում, լուծումների առաջադրում,
- ընթացքի, բովանդակության բարելավման ուղղությամբ, առաջացած խնդիրների վերաբերյալ պրակտիկայի ղեկավարների պարբերական հաշվետվություններ ամբիոնային և ֆակուլտետի խորհրդի նիստերին,
- պրակտիկայի ավարտին՝ ամփոփիչ սեմինարների կազմակերպում,
- թղթապանակների պաշտպանություն,
- արդյունքների վերլուծությունների հիման վրա առաջարկությունների ձևակերպում և ամփոփիչ հաշվետվության ներկայացում:

Ֆակուլտետի տարեկան գործունեության ողջ ընթացքում աշխատանքներում ներգրավված են արտաքին շահակիցները՝ դպրոցների և նախադպրոցական ուսումնական հաստատությունների ներկայացուցիչներ: Նրանց հետ քննարկվում են ֆակուլտետում իրականացվող աշխատանքները, դրանց արդյունքները:

Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետը իրականացրել և շարունակելու է իրականացնել սեմինարներ արտաքին շահակիցների համար "Նախադպրոցական և տարրական կրթության արդիականացում ժամանակակից պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման միջոցով " ծրագրի շրջանակներում: Այդ սեմինարներին մասնակցում են ինչպես տարբեր բուհերի նույն մասնագիտությունները սպասարկող, այնպես էլ դպրոցների և մանկապարտեզների ներկայացուցիչներ: Աշխատանքները շարունակական են լինելու նաև հետագայում: Պանդեմիայով պայմանավորված այդ աշխատանքները այս տարի իրականացվել են առցանց ձևաչափով:

III. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Վերլուծել ֆակուլտետում ՄԿԾ-ների բարելավման ուղղությամբ տարված աշխատանքները, նշել ուսումնառության ակնկալվող արդյունքների համահունչ լինելը և համադրելիությունը մասնագիտական որակավորմանը և Որակավորումների ազգային շրջանակին:
Ֆակուլտետը սերտ համագործակցում է ՀՊՄՀ կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության հետ: Այս ուսումնական տարում բոլոր աշխատանքները կոորդինացվել են այդ վարչության կողմից: ֆակուլտետը համագործակցելով վարչության հետ ապահովել է հեռավարի պայմաններում կրթական գործընթացի կազմակերպման անխզում աշխատանքը: ՄԿԾ-ների բարելավման ուղղությամբ տարված աշխատանքները, ակնկալվող արդյունքների համահունչ լինելը և նմանատիպ այլ աշխատանքները յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում ֆակուլտետի ուշադրության կենտրոնում են: Մասնավորապես այս ուսումնական տարում իրականացվել են հետևյալ աշխատանքները. 1.ՄԿԾ-ների բարելավման և վերանայման ուղղությամբ ֆակուլտետում ձևավորվել են աշխատանքային խմբեր, որտեղ ընդգրկվել են արտաքին և ներքին շահակիցներ: Աշխատանքային խմբերը վերանայել են ֆակուլտետի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մասնագրերն ու ուսումնական պլանները, դրանք համապատասխանեցրել որակավորումների ազգային շրջանակի պահանջներին իրականացվել է անած ուսումնական տարվա ընթացքում: Ինչպես և յուրաքանչյուր տարի՝ աշխատանքներ են իրականացվել այդ վերջնարդյունքների համապատասխան առարկայական նկարագրերում համապատասխան վերջարդյունքների մշակման, դրանց համապատասխան առարկաների բովանդակության և դասավանդման մեջ փոփոխությունների կատարման ուղղությամբ: Ֆակուլտետում պարբերաբար իրականացվում են մասնագիտական կրթական ծրագրերի մշտադիտարկում, որոնց արդյունքները հաշվի կառնվեն ՄԿԾ-ները վերանայելու ընթացքում: Մշտադիրակման արդյունքում իրականացված SWOT վերլուծությունների արդյունքում փոփոխություններ են կատարվում ինչպես առարկաների բովանդակության, այնպես էլ դասավանդման ռազմավարության մեջ: 2.Վերափոխվել են նաև առանձին դասընթացների բովանդակային բաղադրիչները՝ տարրական դասարաններում ուսումնական մի շարք առարկաներում ձեռնարկատիրական կրթության և ֆինանսական կրթության բաղադրիչների ինտեգրման համատեքստում. «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրի «Տեխնոլոգիա և դասավանդման մեթոդիկա», «Ես և շրջապատող աշխարհը», «Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկա» դասընթացի նկարագրերն ու համապատասխանաբար ուսումնական փաթեթները (Տես՝ նշված դասընթացների ԱՈՒՄՓ-ները), որպես ընտրովի դասընթաց մագիստրատուրա 2-րդ կուրսում ներմուծվել է «Մեդիատեխնոլոգիաները տարրական դպրոցում» դասընթացը: Ինֆորմատիկայի ամբիոնի հետ համագործակցության արդյունքում փոփոխությունների են ենթարկվել ՏՀՏ առարկայի բովանդակությունը: Այդ փոփոխությունները պայմանավորված են ֆակուլտետում մուլտիմեդիոն ծրագրերի շուրջ իրականացվող աշխատանքներով: Ծրագրերի համապատասխանեցման միջոցով նպաստելու ենք ապագա ուսուցիչների և դաստիարակների մեդիակոմպետենցիաների ձևավորմանը: 3.Մշակվել են մագիստրոսների մանկավարժահետազոտական պրակտիկայի առարկայական

նկարագրերը, դրանց վերջնարդյունքները համապատասխանեցվել են Բլումի տաքսոնոմիայի աստիճանակարգին: Վերջնարդյունքների համապատասխան մշակվել է թղթապանակ, որի շուրջ աշխատանքներն իրականացվում են պրակտիկայի ընթացքում:

4.Իրականացվել է բեյչմարքինգ, որի արդյունքում մի շարք առարկայական նկարագրերում կատարվել են էական փոփոխություններ:

6.Ամբիոններում ստեղծվել են ընտրովի դասընթացների բազաներ, որոնց վերջնարդյունքները համապատասխանեցվել են մասնագիտական կրթական ծրագրերի վերջնարդյունքներին, նպաստում են ուսանողների մասնագիտական կոմպետենցիաների ձևավորմանը: Այդ բազաներում ընդգրկված առարկաները համապատասխանեցվում են մանկավարժական պրակտիկաների արդյունքում վերհանված այն բացերը, որոնք լրացման կարիք ունեն:

Վերլուծել ֆակուլտետում ուսումնառության արդյունքներին համապատասխան ֆակուլտետում/ամբիոններում սահմանված գնահատման մեթոդներն ու չափանիշները, ակադեմիական ազնվություն ապահովող միջոցառումները, գրագողության դեմ իրականացվող պայքարի քայլերի արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Գնահատման համակարգի, բաղադրիչների, չափանիշների հարցերը քննարկվում են ինչպես ամբիոնների նիստերի, այնպես էլ ֆակուլտետի խորհրդի նիստերում: Այսպես, նորից վերանայվել և 2019-20 ուսումնական տարվանից կիրառության մեջ են դրվել մագիստրոսների աշխատանքային պլանները, որոնք հստակեցնում են նաև ուսումնական պլանով նախատեսված հետազոտական բաղադրիչի գնահատման պահանջները, քննարկվել և առաջարկություններ են ներկայացվել գնահատման բազմագործոն բաղադրիչները և դրանց համար նախատեսված կշիռները. մասնագիտական կրթական ծրագրի վերջնարդյունքներին համապատասխան մշակվել է դասընթացների համար տարբերակված գնահատման ձևեր: Նկատի ունենալով ընթացիկ գնահատման մեթոդաբանությունը՝ ինչը ենթադրում է ստեղծագործական բնույթի առաջադրանքներ, ուսանողի ակտիվութունը և ուսումնական գործունեության գնահատումը միջանկյալ գնահատականների միջև ընկած ժամանակահատվածում, ֆակուլտետն առաջարկել է նաև ընթացիկ գնահատման ձևին տրվող թվային, բալային տարբերակից անցնել խոսքային տարբերակի՝ ստուգված-չստուգված:
Այս ուսումնական տարվա ընթացքում միջանկյալ ստուգումներն առցանց կազմակերպելու նպատակով համագործակցել ենք ՀՊՄՀ -ի Կրթության էլեկտրոնային կառավարման բաժնի հետ, աշխատանքները կազմակերպել ենք բաժնի կողմից ներկայացված կանոնակարգի պահպանմամբ:

Գրագողության դեմ պայքարի նպատակով մագիստրատուրայում սովորող ուսանողները յուրաքանչյուր կիսամյակ ներկայացնում են հաշվետվություն կատարած աշխատանքների մասին:

Ինչպես ավարտական, այնպես էլ մագիստրոսական թեզեր գրող ուսանողները խմբային հանդիպումների ընթացքում ներկայացնում են հաշվետվություններ, կատարած աշխատանքների արդյունքները: Գրագողության բացառմանը նպաստում են նաև ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների ընտրությունը, որոնք ստիպում են ուսանողին ինքնուրույն հետազոտություն անել:Այս հարցին նվիրված հատուկ ամբիոնային նիստեր են կազմակերպվում, թեմաների ձևակերպման և հաստատման հարցը մի քանի անգամ լսվում, որից հետո նոր հաստատվում է ֆակուլտետի խորհրդի նիստում (Տես՝ 2020-21 թ. ֆակուլտետի խորհրդի նիստերի արձանագրությունները):
Գրագողության և ցիտման նորմերի պահպանման նպատակով "Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն" դասընթացի շրջանակներում ուսանողները ծանոթանում են այդ կանոնների պահպանմանը վերաբերող կարգերին և կանոններին, այդ կանոնների համապատասխան գրում են հոդվածներ և այլ աշխատանքներ, որոնք քննարկվում են լսարանում:

Ֆակուլտետի աշխատանքները ուսանողների և դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը նպաստելու ուղղությամբ:

ՄԿԾ–ների վերանայման ընթացքում ուսումնասիրվել է միջազգային փորձը, կրթական ծրագրերը համեմատվել են այլ երկրների կրթական ծրագրերի հետ. Ֆինլանդիայի Օուլու համալսարան, Սանկտ Պետերբուրգի Գերցենի անվան մանկավարժական համալսարան, Մինսկի Մաքսիմ Տանկի անվան պետական մանկավարժական համալսարան: Ուսումնական պլաններում ներառված առարկաները համապատասխանեցվել են տարբեր երկրներում նույն ծրագիրն իրականացնող ուսումնական հաստատությունների պլանների հետ:

Դրա շնորհիվ ֆակուլտետը կարողանում է իրականացնել՝

- ուսանողների փոխանակում Ֆինլանդիայի Օուլու համալսարանի հետ (Erasmus Plus կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում 2019-2020 ուստարում՝ 1 ուսանող):

Որպես կանոն ֆակուլտետի դասախոսները յուրաքանչյուր տարի ակտիվ մասնակցել են տարաբնույթ վերապատրաստման դասընթացների, միջազգային վեբինարների: Սակայն այս տարի, պայմանավորված քովիդով, այս աշխատանքները լիարժեք չեն իրականացվել: 2020-2021 ուսումնական տարվա առաջին կիսամյակի համար նախատեսված չի նաև ուսանողների փոխանակում Ֆինլանդիայի Օուլու համալսարանի հետ:

IV. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

Ֆակուլտետում հաշվետու տարում իրականացված ուսանողների հավաքագրման աշխատանքները, մեխանիզմները:			
Ֆակուլտետում ուսանողների թիվը՝ ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի:			
Բակալավրի	առկա	322	
	հեռակա	403	
Մագիստրոսի	առկա	103	
	հեռակա	132	
Ընդհանուր ուսանողների թիվը		960	
Ուսումնառողների շարժը հաշվետու տարվա կտրվածքով			
Ուսանողների արտահոսք			
Հաստատություն/երկիր		թիվ	
1	Օուլու համալսարան, Ֆինլանդիա	1	
2			
3			
4			
5			
Ուսանողների ներհոսք			
Հաստատություն/երկիր		թիվ	
1	Երևանի «Հայբուսակ» համալսարան	1	
2	Արարատի պետական քոլեջ	4	
3	Արմավիրի պետական ինդուստրիալ-մանկավարժական քոլեջ	1	
4	Երևանի պետական հումանիտար քոլեջ	5	
5	Էջմիածնի պետական քոլեջ	3	
6	Սևանի բազմագործառութային պետական քոլեջ	4	
7	Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջ	1	
8	Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ	1	
Հեռացումներ և վերականգնումներ		տոկոս	թիվ
1	Դուրս մնացած ուսանողների տոկոսը/ թիվը	0,52%	5
2	Վերականգնված ուսանողների տոկոսը/ թիվը	2,18%	21
3	Իր դիմումի համաձայն ազատված և հետագայում վերականգնման նպատակով ուսանողներ	1,35%	13

Վերլուծել ֆակուլտետի ուսանողների հավաքագրման իրականացման մեխանիզմների արդյունավետությունը:
Հիմք ընդունելով նախորդ տարիների հաջող պրակտիկան և ուսանողների կայուն հոսքը ՝ Սկզբնական կրթության ֆակուլտետը շարունակում է իրականացնել ուսանողների հավաքագրման ինչպես նախորդ մեխանիզմներն ու ձևաչափերը, այնպես էլ սահմանում է նորերը: Ուսանողների հավաքագրման նպատակով Ֆակուլտետում գործում է դիմորդների մասնագիտական կողմնորոշման աշխատանքային խումբ, որը պարբերաբար հաշվետվություններ է ներկայացնում ֆակուլտետի խորհրդի նիստերի ընթացքում: Աշխատանքներն այս տարի իրականացվել են հետևյալ ուղղություններով.

- անմիջական կապերի և զանգերի միջոցով ,
- առցանց ռեժիմով. մասնավորապես ֆակուլտետի ֆեյսբուքյան էջում կրկին ակտիվացրել ենք տեղեկատվական նամակներ դպրոցների տնօրեններին և դիմորդների համար, ֆակուլտետի մասնագիտությունների վերաբերյալ բուկլետները, ֆոտոշարք՝ շրջայց սկզբնական կրթության ֆակուլտետում, մեզ հետ կապի բոլոր հնարավոր կոորդինատները, անգամ զեղչերի մասին գրությունները, քանի որ այս հարցով շատ են հետաքրքրվում,
- «Հաջողության բանաձև» հաղորդաշարի սկզբնական կրթության ֆակուլտետին վերաբերող բոլոր հաղորդումները իրենց լինքերով ուղարկել ենք համացանցում մեզ հետ համագործակցող դպրոցներին և պրակտիկայի մեր դպրոցներին.
- ֆակուլտետում սովորող և տարբեր տարիներին մեր ֆակուլտետն ավարտած ուսանողների ուժերով պատրաստվել են տեսանյութեր՝ "Հաջողված պատմություններ" խորագրով, որտեղ ուսանողները ներկայացրել են իրենց հաջողության պատմությունները և հրավիրել դիմորդներին սկզբնական կրթության ֆակուլտետ սովորելու:

Դասախոսների և գործընկերների, ուսանողների և դեկանատի աշխատակիցները ևս ընդգրկվել են այս գործընթացում:

Որոշակի բացատրական և հետևողական աշխատանքներ են տարվել նաև ֆակուլտետի բակալավրի կրթական ծրագրերի շրջանավարտների հետ:Նախնական տվյալներով բակալավրի կրթական ծրագրերի մեր ուսանողներից մագիստրատուրայում կրթությունը շարունակել ցանկացել են 4-ից ավել ուսանող:

Այսօր էլ աշխատանքները դեռ շարունակվում են առնցանց ռեժիմով, ֆակուլտետի տեղեկատվական էջում, ֆեյսբուքյան էջում իրականացվում է անհրաժեշտ ուսումնական, մեթոդական խորհրդատվություն և տեղեկատվության տրամադրում դիմորդներին, կրթական հաստատություններին:

Մասնագիտական կողմնորոծման խումբը աշխատանքներ է իրականացրել նաև առկա ուսուցման համակարգի բակալավրի կրթական ծրագրերով ֆակուլտետ դիմած և ցածր միավորներ հավաքած ուսանողների հետ՝ հեռակա ուսուցման համակարգում իրենց ուժերը փորձելու ուղղությամբ: Քանի որ այստեղ մենք խնդիրներ ունենք. նախորդ տարվանից, ինչ-ինչ պատճառներով, այդ թվում նաև վարձավճարի ավելացմամբ պայմանվորված, կտրուկ նվազել է բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով հեռակա ուսուցման համակարգ դիմող դիմորդների, ուսանողների թիվը: Այս համատեքստում նաև պլանավորվում է իրականացնել առցանց խորհրդատվություններ ամբիոնների կողմից ոչ բազային կրթությամբ մագիստրատուրա դիմող ուսանողների համար: (Տե՛ս ֆակուլտետի հայտարարությունները)
Ուսանողների ներգրավման նպատակով իրականացվել են նաև այլ աշխատանքներ.

- Մանկավարժական պրակտիկայի բազաներ հանդիսացող կրթական հաստատությունների հետ համատեղ բովանդակային աշխատանքների իրականացում, քննարկումներ նաև Googl-classroom կրթական հարթակում:
- Օլիմպիադաների կազմակերպում և աշակերտներին մրցանակների տրամադրում: Այս տարի օլիմպիադան իրականացվել է առցանց տարբերակով,
- Ֆակուլտետի ուսանողների և դասախոսների՝ դիմորդների ուղղորդմանն ուղղված անհատական աշխատանքներ:

Այս և այլ աշխատանքները ավանադույթ են դարձել և իրականացվում են բավականին արդյունավետ:

Վերհանել հեռացումների և վերականգնումների պատճառները: (տեքստը այստեղ) Հեռացում. 1. Ուսման անբավարար առաջադիմություն 2. Ուսման վարձի պարտք Վերականգնում. 1. կրթությունը շարունակելու և բարձրագույն կրթություն ստանալու ցանկություն 2. աշխատաշուկայում պահանջված մասնագիտությամբ աշխատանք ունենալու հեռանկար 3.համալսարանում անհրաժեշտ մեխանիզմների առկայություն վերականգնվելու համար

Հաշետու տարում ֆակուլտետի ուսանողների ներգրավվածությունը մասնագիտական գիտահետազոտական աշխատանքներում:		
Ֆակուլտետի գերակա գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված ուսանողների թիվը:		
Բակալավր		2
Մագիստրոս		1
Ընդհանուր		3
Ուսումնառողների մասնակցությամբ իրականացվող ծրագրերի ցանկը և դրանցում ներգրավված ուսանողների թիվը		
	Գիտահետազոտական ծրագիր	ուսանողների թիվ
1		-
2		
3		
4		
Ուսումնառողների հեղինակությամբ և/կամ համահեղինակությամբ տպագրված աշխատանքների թիվը		
	Տպագրված աշխատանք	ուսանողների թիվ
1		-
2		
3		
4		

V. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Վերլուծել ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի արդյունավետությունը հաշվետու տարում և մասնագիտական որակների համապատասխանությունը ֆակուլտետի մասնագիտական կրթական ծրագրերի նպատակներին:
Ֆակուլտետի մասնագիտական ամբիոններում աշխատում են համապատասխան որակավորում ունեցող դասախոսներ. · 1 ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, · 6 գիտությունների դոկտոր, պրոֆեսոր · 1 գիտությունների թեկնածու, պրոֆեսոր · 1 գիտությունների թեկնածու, պրոֆեսոր պ/պ · 24 գիտությունների թեկնածու, դոցենտ · 6 ասիստենտ · 9 դասախոս · 1 գիտությունների թեկնածու, ասիստենտ · 1 դոցենտ · 3 գիտությունների թեկնածու, դասախոս: /Տե՛ս ամբիոնների բաշխման գրությունները/: Ամբիոններում աշխատանքներ են իրականացվում դասախոսների մասնագիտական գիտական ներուժը կատարելագործելու ուղղությամբ: Ամբիոններում կազմակերպվում են սեմինարներ, որոնց ընթացքում քննարկվում են ժամանակակից գիտության նվաճումները, նորարարությունները, տվյալ բնագավառի հետազոտության արդյունքները /Տե՛ս ամբիոնների նիստերի արձանագրություններ/,

ամբիոնային նիստերում քննարկվում են նաև փոխադարձ դասալսումների արդյունքները:
Դասախոսների կատարած աշխատանքների արդյունավետությունը և համապատասխանությունը համալսարանի և ֆակուլտետի ռազմավարական ծրագրի հիմնական ուղղություններին քննարկում է ինչպես ամբիոնների նիստերի, այնպես էլ ֆակուլտետի խորհրդի նիստերում: Հիմնական հարցը, որը շատ հաճախ շոշափվում է՝ դասավանդման մեթոդների, առարկայական վերջնարդյունքների, գնահատման ձևերի համապատասխանեցման հարցն է, որն արդյունավետ և որակյալ կրթության ապահովման գրավականն է:
Ֆակուլտետի դասախոսներն ընդգրկված են «Նախադպրոցական և տարրական կրթության արդիականացում ժամանակի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման միջոցով» դրամաշնորհային ծրագրին, որը ենթադրում է տեղեկատվական և հաղորդակցական կարողությունների զարգացում, այդ հմտությունների կիրառում հետազոտությունների և դասավանդման գործընթացներում: «Կրթության բարելավում» վարկային ծրագրի շրջանակներում իրականացվող «Հայաստանի բարձրագույն կրթության նորարարությունների մրցակցային հիմնադրամի» միջոցներից իրականացվող «Նախադպրոցական և տարրական կրթության արդիականացում ժամանակի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման միջոցով» ծրագրի շրջանակներում մշակվել են վերապատրաստման մոդուլներ ֆակուլտետի դասախոսների համար: Վերապատրաստումներն իրականացվել են երկու ուղղություններով՝ ծանոթացում որակական և քանակական հետազոտության մեթոդների և համակարգչային Adobe ծրագրի հետ: Այդ աշխատանքները շարունակական են , այժմ ծրագրի շրջանակներում ձեռքբերված գիտելիքների հիման վրա կատարվում են փոփոխություններ ինչպես առարկաների բովանդակության, այնպես էլ առարկաների վերջնարդյունքների մեջ:
Դասախոսների կատարելագործմանն են ուղղված նաև՝
- ներամբիոնային սեմինարները և գիտական լսումները, ֆակուլտետային սեմինարները(Տես՝ ՀՊՄՀ Google docs-ում տեղադրված ամբիոնային սեմինարների ժամանակացույցերը. մանկավարժական պրակտիկաների , դասընթացների նկարագրերի և բովանդակության բարելավում ...):
- Համագործակցող համալսարանների մասնագետների կողմից դասախոսների համար դասախոսություններն ու վարպետած դասերը.
- պարբերաբար իրականացվող դասալսումները, որոնց արդյունքները քննարկվել են ամբիոնների նիստերում,
  - ֆակուլտետի ՈՒԳ-ի կողմից կազմակերպված սեմինարները, որին մասնակցում են ոչ միայն ուսանողները, այլ նաև դասախոսները,
  - Մանկավարժական պրակտիկաների բարելավմանն ուղղված սեմինարների կազմակերպումը, որոնց մասնակցում են ուսանողներ, մեթոդնիստներ, դասախոսներ,
    - համալսարանի կողմից կազմակերպվո վերապատրաստումներ,
- ներֆակուլտետային սեմինարները՝ նոր մասնագրերի և առարկայական նկարագրերի բովանդակության և կառուցվածքի վերաբերյա,

Դասախոսներին հետաքրքրող տարաբնույթ տեսական և մեթոդական հարցերի շուրջ կազմակերպվել են ամբիոնային գիտամեթոդական սեմինարներ: Կրթական ծրագրերի հետազոտական բաղադրիչի բարելավման ուղղությամբ ծանոթացում հետազոտական մեթոդների, հետազոտությունների կազմակերպման ընթացքի, հետազոտության տեսակների միջազգային փորձի հետ:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Ֆակուլտետը հաշվետու տարում իրականացրել է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:
Վերլուծել հաշվետու տարում ֆակուլտետում հետազոտական ոլորտում հետաքրքրությունների և հավակնությունների ռազմավարության արդյունավետությունը և արդիականությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: (տեքստը այստեղ) Վերլուծել հաշվետու տարում ֆակուլտետում հետազոտական ոլորտում հետաքրքրությունների և հավակնությունների ռազմավարության արդյունավետությունը և արդիականությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Հաշվետու ժամանակահատվածում սկզբնական կրթության ֆակուլտետի 3 ամբիոնները աշխատել են հետևյալ հետազոտական ոլորտների ուղղությամբ.

1. **Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն՝** «Տարրական դպրոցում մայրենիի դասավանդման գործընթացի արդիականացումը» :
2. **Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբոին՝** «Մաթեմատիկայի տարրական դասարանների չափորոշիչների, ծրագրերի, դասագրքերի համեմատական վերլուծություն (միջազգային փորձի ուսումնասիրում)»:
3. **Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկայի ամբիոն՝** «Նախադպրոցական կրթության պարադիգմալ զարգացումները»:

Ամբիոններում նշված ուղղություններով իրականացվում են հետազոտություններ: Այդ հետազոտությունների իրականացման մեջ ընդգրկված են նաև ուսանողները, որոնք նշված թեմաներով գրում են ավարտական և մագիստրոսական աշխատանքներ, կատարում են դրանց հետ կապված հետազոտություններ ՀՀ կրթական հաստատություններում /տես՝ ֆակուլտետի նիստեի քաղվածքներ/

Ֆակուլտետի գործունեությունը հետազոտական գործունեության միջազգայնացման ուղղությամբ:

ԱՊՀ երկրներում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների թիվ

	Ամսագիրը (երկիրը)	Վարկանիշը	Հրապարակումների թիվ
1			
2			
3			
4			
5			

Օտարերկրյա միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկը

	Ամսագիրը (երկիրը)	Վարկանիշը	Հրապարակումների թիվ
1	On direct and inverse problems in the description of lattice random fields-Lectures in pure and applied mathematics-10 p.-Potsdam-English-2020- https://publishup.uni-potsdam.de/frontdoor/index/index/docId/4591	scopus	1
2	International Journal Scientia Paedagogica Experimentalis(SPE)	scopus	1
3	Typical Expression of Cognitive Dissonance and Consonance in the Course of Argumentation	WISDOM 2(13), 2019 /հրատարակվել է 2020-ին/	1

	among Primary-School Children Playing Chess		
4			
5			
ՀՀ-ում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկը			
	Ամսագիրը	Վարկանիշը	Հրապարակումների թիվ
1			
2			
3			
4			
5			

Վերլուծել ֆակուլտետի հետազոտական գործունեության միջազգայնացման աշխատանքները հաշվետու տարում: (տեքստը այստեղ)

Սկզբնական կրթության ֆակուլտետի ամբիոնները հաշվետու տարում հետազոտական ուղղությունների միջազգայնացման ուղղությամբ արել են հնարավոր ամեն ինչ: Սակայն պանդեմիայով պայմանավրած մեր գործընկերները ևս բավականին պասի են եղել, ինչը թույլ չի տվել այդ աշխատանքները կազմակերպել բավարար ծավալով:

Ֆակուլտետի աշխատանքները հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման ուղղությամբ:

Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցվածության վերլուծություն: Հետազոտական գործունեությունը և ուսումնական գործընթացի փոխկապակցումն արտահայտող հիմքեր (գիտական աշխատանքներ ուսանողների մասնակցությամբ, հետազոտությունների շնորհիվ վերանայված ծրագրեր, այլ աշխատանքներ): (տեքստը այստեղ)

Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցվածության վերլուծություն: Հետազոտական գործունեությունը և ուսումնական գործընթացի փոխկապակցումն արտահայտող հիմքեր (գիտական աշխատանքներ ուսանողների մասնակցությամբ, հետազոտությունների շնորհիվ վերանայված ծրագրեր, այլ աշխատանքներ):

«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» և «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտությունների բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի հետազոտական բաղադրիչի բարելավման նպատակով իրականացվել է մի քանի առաջատար բուհերի կրթական ծրագրերի հետազոտական բաղադրիչների ուսումնասիրություն և համեմատություն: Հաշվի առնելով Ֆինլանդիայի առաջընթացը սկզբնական կրթության զարգացման ոլորտում ուսումնասիրվել են Ֆինլանդիայի Օուլուի համալսարանի ՄԿԾ-ները: Նշված համալսարանի հետ համագործակցության շրջանակներում ՀՊՄՀ սկզբնական կրթության ֆակուլտետի տարրական մանկավարժություն և մեթոդիկա ԲԿ և ՄԿ ծրագրերը բարելավվել են, համապատասխանեցվել: Բրիտանական, Շոտլանդական, Ամերիկյան մի շարք համալսարանների փորձն ուսումնասիրելու ընթացքում դուրս է բերվել հետազոտական աշխատանքների իրականացման բովանդակային և կազմակերպական մի շարք հարցեր, որոնք հաշվի են առնվել ֆակուլտետում նույն ուղղությամբ տարվող աշխատանքները պլանավորելիս և կազմակերպելիս: Բեչմարքինգի արդյունքում կատարվել են առաջարկություններ, փոփոխություններ կատարվել առարկայական նկարագրերում և առարկաների վերջնարդյունքներում:

Ներկայացվել է առաջարկությունների փաթեթ, որը կօգնի բարելավել հետազոտական աշխատանքների բովանդակությունն ու արդյունքները ՄԿԾ-ում.

1. ՄԿԾ-ում դասավանդվող բոլոր առարկաների մեկ միջանկյալը դարձնել հետազոտական բնյութի և ծառայեցնել մագիստրոսական թեզի հետազոտական աշխատանքին /արդեն իրականացվում է /:

2. Որպես միջանկյալ ստուգման հետազոտական-ստեղծագործական ձևեր կարող են հանդես գալ նախագծային աշխատանքները, իրավիճակների վերլուծությունները, զրույցների և հարցումների իրականացումը և դրանց վերլուծությունն առարկայի համատեքստում/արդեն իրականացվում է /:

3. Աշխատանքները կազմակերպելու ընթացքում հենվել մուլտիմեդիոն լսարանների նյութատեխնիկական բազայի վրա, օգտագործել այդ լսարանների հնարավորությունները սեմինարներ, քննարկումներ հետազոտական աշխատանքի արդյունքները ներկայացնելու և վերլուծելու նպատակով /արդեն իրականացվում է /:

4. Ծրագրի շրջանակներում ստեղծված նյութերը որպես մոդուլներ ներառել տարբեր առարկաների մեջ, դրանք դարձնելով հասանելի բոլորի համար/ընթացքում է/:

Կատարված աշխատանքների արդյունքում մշակվել են մագիստրոսի աշխատանքային պլան, գնահատման չափաբիշներ, դրանք դրվել են կիրառության մեջ:

Առաջարկությունները քննարկվել են Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստում և արժանացել է հավանության:

Ֆակուլտետի աշխատանքները հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման ուղղությամբ:

1. Ուսանողների հետազոտական աշխատանքներին և դրանց արդյունքներին նվիրված ամենամյա ուսանողական գիտաժողովի կազմակերպում:

2. Հոդվածների հրատարակում ուսանողների կողմից:

3. Դասախոս-ուսանող գիտական հոդվածների համատեղ հրապարակումներ. այս պահանջը ներառված է նաև մագիստրոսի աշխատանքային պլանում:

4. Ուսումնասիրություններ մանկավարժական և մանկավարժահետազոտական պրակտիկաների ընթացքում մանկավարժական պրակտիկայի բազա հանդիսացող կրթական հաստատություններում. այդ պահանջի ներառումը մանկավարժական պրակտիկայի առարկայական նկարագրերում: Հետազոտությունների, հատկապես case stady, ներկայացումն ու գնահատումը ուսանողների թղթապանակների պաշտպանության ժամանակ:

5. Աշխատող ուսանողների կողմից ուսումնասիրությունների իրականացում իրենց կրթական հաստատություններում և դրանց ներկայացում ֆակուլտետային սեմինարների ժամանակ, մագիստրոսի կրթական ծրագրերում հետազոտություններին ուղղված համապատասխան դասընթացների ժամերին:

Արդյունքում՝ ուսանողների մասնագիտական կարողությունների զարգացում, ինչպես նաև բարելավված մագիստրոսական և ավարտական աշխատանքներ, մանկավարժական պրակտիկայի թղթապանակներ:
Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետի 3 ամբիոնները իրականացրել են իրենց ուղղություններով հետազոտական աշխատանքներ, որոնց ներգրավված են եղել ինչպես բակալավրիատում, այնպես էլ մագիստրատուրայում սովորող ուսանողներ: Դասախոսների հետ իրականացնելով հետազոտություններ որոշակի ոլորտներում ուսանողները զարգացրել են իրենց հետազոտական կարողությունները:

VII. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Վերլուծել առկա մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրի՝ լսարանների, լաբորատորիաների, ուսումնական կաբինետների, արվեստանոցների, արհեստանոցների արդյունավետությունը՝ նշելով շահակիցների բավարարվածության աստիճանը:
Ֆակուլտետի տրամադրության տակ գտնվող լսարաններն ապահովված են անհրաժեշտ տեխնիկայով, ունենք ՏՀՏ–ով հագեցած 6 լսարան, ինչպես նաև խաղերի կենտրոն, 2 մուլտիմեդիոն լսարաններ, 1 մուլտիմեդիոն լաբորատորիա բոլոր անհրաժեշտ սարքավորումներով: 2019 թվականից մուլտիմեդիոն լաբորատորիան և լսարանները ապահովվել են ծրագրերով, որոնք հնարավորություն են տվել ստեղծել էլեկտրոնային innostad.am մուլտիմեդիոն հարթակ: Հարթակի միջոցով ստեղծված վարժությունները թույլ են տալիս իրականացնել վերապատրաստումներ ինչպես դասախոսների, ուսանողների, այնպես էլ սեմինարներ ուսուցիչների և դաստիարակների համար: Հարկ է սակայն նշել, որ առերես կրթության պայմաններում լսարանային ֆոնդի հետ կապված խնդիրներ ունենում ենք, քանի որ •սկզբնական կրթության ֆակուլտետը համալսարանի ամենամեծ ֆակուլտետներից է, որտեղ սովորում են, շուրջ 1000 ուսանողներ, •ֆակուլտետի մասնագիտական կրթական ծրագրերում, հատկապես Տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտական կրթական ծրագիրը, նախատեսված առանցքային դասընթացները պահանջում են աշխատանք փոքր խմբերով, •համալսարանի ռազմավարական ծրագրի կարևորագույն պահանջներով պայմանավորված իրականացվում են պարապմունքներ՝ դասավանդման և ուսումնառության ինտերակտիվ մեթոդներով, աշխատանքը փոքր խմբերով, քննարկումներ: Լսարանային ֆոնդի հետ կապված խնդիրները փորձում ենք լուծել հարակից ֆակուլտետների հետ համագործակցության շնորհիվ: Ֆակուլտետը դժվարություն ուներ նաև ուսումնական գործընթացը 2-րդ հերթափոխով կազմակերպելու հարցում, քանի որ դասերն ավարտվում են բավականին ուշ, և շրջաններից եկող ուսանողները տրանսպորտի հետ կապված խնդիրներ են ունենում /ֆակուլտետի ուսանողների մեծ մասը շրջաններից են/: Սակայն 2020-2021 ուսումնական տարում բակալավրի կրթական ծրագրով կազմակերպվող դասընթացներն արդեն իրականացվել են առցանց, իսկ մասամբ առերեսի պայմաններում ֆակուլտետը հնարավորություն է ունեցել օգտագործել այլ ֆոնդեր ևս:

VIII. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հաշվետու տարում ֆակուլտետի հաշվետվողականության գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը, հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմներ:
Պատերազմի ընթացքում ուսանողական խորհրդի կատարած բարեգործական աշխատանքները. ՊԲ-ին փոխանցվել է 300 արկղ սնունդ, հիգիենայի պարագաներ, ջուր, դեղորայք, հագուստ: 1. Արցախից Հայաստան եկած 300 ընտանիքի հատկացվել է ժամանակավոր բնակության համար կացարաններ և նրանցից 100-ին տրամադրվել տաք հագուստ: 2. 30 արկղ հագուստ ուղարկվել է Կապանում գտնվող արցախցի երեխաներին և կանանց: 3. Հավաքագրվել է գիրք և թղթեր. գրքերը վաճառվել են, իսկ թղթերը հանձնվել մակուլատուրա: Գումարը կուղղվի վիրավոր զինվորներին որևէ աջակցություն տրամադրելուն: 4. «Ամբեր» և «Ուրարտու» հյուրանոցներում կամավոր ուսանողներն անցկացրել են սեմինար-պարապմունքներ, դասընթացներ, միջոցառումներ, ապահովել երեխաների ժամանցը: 5. Հանձնվել է նվերներ «Ամբեր» և «Ուրարտու» հյուրանոցներում գտնվող երեխաներին, և Գեղակերտ գյուղում գտնվող արցախցի բալիկներից 30-ին: 6. 350 խաչ Արկադի Տեր-Թադևոսյանի միջոցով փոխանցվել է զինվորներին: Դրանից բացի իրակացվել և շարունակում ենք իրականացնել հետևյալ աշխատանքները. 1.համագործակցություն, խորհրդատվություն և քննարկումներ Արցախի պետական համալսարանին պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ, կրթական տարաբնույթ փաստաթղթերի,

ուսումնական նյութերի տրամադրում, Արցախի ուսանողների և դասախոսների մասնակցությամբ կոնֆերանսների կազմակերպում (Ի կատարում՝ Արցախի պետական համալսարանի ռեկտորի 20.06.2017թ. գրության ուղղված ՀՊՄՀ ռեկտորին: Գործընթացը շարունակական է), 2.բարեգործական այցեր մանկատներ և հատուկ դպրոցներ, կրթական ծառայությունների մատուցում, հանդեսների կազմակերպում (յուրաքանչյուր ուսումնական տարի այս աշխատանքները իրականացվում են, համակարգող պատասխանատուների հաշվետվությունները առկա են, սկզբնական կրթության ֆակուլտետի տեղեկատվական հարթակու այդ աշխատանքները լուսաբանվում են), 3.վերապատրաստումներ դասախոսների կողմից /Սփյուռքի ուսուցիչների վերապատրաստումներ, ՀՃՊՀ դասախոսների վերապատրաստումներ/, 4.առցանց հանդիպումներ և քննարկումներ ֆակուլտետի պրակտիկայի բազա հանդիսացող մանկապարտեզների և դպրոցների մանկավարժների հետ, ուսումնամեթոդական նյութերի տրամադրում (Տես սկզբնական կրթության ֆակուլտետի Classroom էլեկտրոնային հարթակ «Մանկավարժական պրակտիկա» դասընթաց):

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Ֆակուլտետի համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ հաշվետու տարում:
Ներկայացնել արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացներում ֆակուլտետի միջոցառումները և հիմնական ձեռքբերումները: Վերլուծել համագործակցության արդյունավետությունը:
(տեքստը այստեղ) Ֆակուլտետն իրականացնում է աշխատանքներ նաև միջազգային համագործակցության ուղղությամբ. մասնակցություն միջազգային գիտաժողովների, հոդվածների հրատարակումներ միջազգային ամսագրերում, մասնակցություն ֆորումների (նաև առցանց), փոխադարձ այցելություններ, հեղինակավոր գիտնականների դասախոսությունների, վարպետաց դասերի կազմակերպում, մասնակցություն ուսանողների փոխանակման ծրագրերին: Այս տարի այս աշխատանքները մի փոքր տուժել են, քանի որ պանդեմիայով պայմանավորված բավականին պասիվ են եղել նաև մեր գործընկերները, ավանդական դարձած սեմինարներն ու վեբինարները, այցելությունները հնարավոր չի եղել անկացնել: Շարունակվում են ֆակուլտետի բավականին տարաբնույթ և սերտ կապերը Ֆինլանդիայի Օուլու համալսարանի մանկավարժության ֆակուլտետի հետ մեր համագործակցությունը. համատեղ մագիստրոսական թեզերի ղեկավարումը (1 մագիստրոսական թեզի համաղեկավարում: Erasmus+ կրեդիտային շարժունության ծրագրի շրջանակներում հաշվետու տարում 1 ուսանող 1 կիսամյակ սովորել են Օուլու համալսարանի կրթության ֆակուլտետում (Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության բակալավր 2-րդ կուրսի ուսանողուհի Անահիտ Գրիշայի Փանոսյանը): Համատեղ մագիստրոսական ծրագիր ունենալու մեր առաջարկը առայժմ զարգացում չի ունենում, չնայած այն հանգամանքին, որ բազմիցս նամակագրությամբ, Skipe կապի միջոցով այդ մասին խոսել ենք մեր ֆին գործընկերների հետ: Բելառուսի Մաքսիմ Տանկի համալսարանի հետ համագործակցության շրջանակներում պայմանավորվածություններ ենք ձեռք բերել հատկապես Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա բակալավրի կրթական ծրագրի ուսանողների մանկավարժական պրակտիկան Մինսկի մանկապարտեզներում կազմակերպելու ուղղությամբ: Ինչպես արդեն նշվել է Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնը մշակվել «Նախադպրոցական կրթության որակի գնահատում» մագիստրոսի նոր կրթական ծրագիր և առաջարկը, որն ընդունվելու դեպքում այն վերածվելու է նաև ցանցային կրթական ծրագրի Բելառուսի Մաքսիմ Տանկի անվան պետական համալսարանի և Սանկտ-Պետերբուրգի մանկավարժական համալսարանների միջև:

Ֆակուլտետը համագործակցում է նաև ՌԴ մի շարք այլ պետական համալսարանների հետ. Մոսկվայի պետական մանկավարժահոգեբանական համալսարան, Չելյաբինսկի պետական մանկավարժական համալսարան, Կազանի պետական համալսարան, Իրկուտսկի պետական համալսարան, նոր համագործակցության համաձայնագրեր ունենք նաև Ռոստովի Հարավային ֆեդերալ համալսարանի հետ:

Շարունակվում է համագործակցությունը Մոսկվայի պետական հոգեբանամանկավարժական համալսարանի «Խաղերի և խաղալիքների գիտաուսումնական լաբորատորիայի հետ»: Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի դասախոսներ Մ.Ամիրաղյանը և Ա.Խուգեյանը գործուղվել են Մոսկվա, ծանոթացել կենտրոնի աշխատանքներին, մասնակցել սեմինարների, քննարկել հետագա համագործակցության ուղիները:Այս համատեքստում աշխուժացել է ֆակուլտետի Խաղերի և խաղալիքների ուսումնական կենտրոնը, կենտրոնի աշխատանքներում ընդգրկված են նաև ֆակուլտետի ուսանողները:

Այժ քննարկվում է Չեխիայի Բոհեմիա համալսարանի կրթության ֆակուլտետի հետ համագործակցության շրջանակները:

Համագործակցությունը սերտացնելու և արտասահմանից ուսանողներ ունենալու նպատակով ֆակուլտետը թարգմանել և անգլերեն տարբերակով Googl.dox –ում տեղադրվել է «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագիրը: Արձագանքել է մեկ սիրիացի դիմորդ:

ՆԱխադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնը սերտ համագործակցում է Ուկրաինայի մեր գործընկերների հետ: Ներկայացնենք տվյալները.

1. Ուկրաինայի Խարկով քաղաքում սույն թվականի ապրիլի 9-10-ը տեղի է ունեցել «Дошкольное образование в современном образовательном пространстве:

актуальные проблемы, опыт, инновации» խորագրով VI-րդ միջազգային գիտագործնական կոնֆերերանս՝ նվիրված Հ.Ս. Սկովորոդայի անվան Խարկովի ազգային մանկավարժական համալսարանի հիմնադրման 215-րդ ամյակին, որի կազմակերպմանը Ուկրաինայի կրթության և գիտության նախարարության և առաջատար ԲՈՒՀ-րի, Բելառուսի, Վրաստանի մանկավարժական համալսարանների հետ մեկտեղ մասնակցել է նաև Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ը, իսկ նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի վարիչ՝ Վ.Ս. Կարապետյանն ընդգրկվել է կոնֆերանսի ծրագրային կոմիտեի կազմում:

2. «Дошкольное образование в современном образовательном пространстве:

актуальные проблемы, опыт, инновации» խորագրով VI-րդ միջազգային գիտագործնական կոնֆերերանսին հոդվածներով մասնակցել է նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի 7 դասախոս:

3.Ուկրաինայի մայրաքաղաք Կիևում ՝ սույն թվականի ապրիլի 30-ին՝ online ձևաչափով կազմակերպվել է «Технологии формирования позитивной общественного мнения об образовательных инновациях» խորագրով համաուկրաինական գիտապրակտիկ կոնֆերանս, որին զեկույցով և հոդվածի տպագրությամբ հանդես են եկել նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի վարիչ Վ. Կարապետյանը և դոցենտ Ա. Դալլաքյանը / Методологические проблемы организации профессионального образования.- ТЕХНОЛОГІЇ ФОРМУВАННЯ ПОЗИТИВНОЇ ГРОМАДСЬКОЇ ДУМКИ ЩОДО ОСВІТНІХ ІННОВАЦІЙ: Матеріали Всеукраїнської науково-практичної конференції (30 квітня 2020 р., Інститут соціальної та політичної психології НАПН України, лабораторія психології спілкування) // ВІСНИК ПСИХОЛОГІЇ І ПЕДАГОГІКИ. – Випуск 26. – 2020. - [Електронний ресурс]. – URL:: http://www.psyh.kiev.ua/Збірник_наук._праць._-_Випуск_26

4.Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի վարիչ Վ. Կարապետյանը և դասախոսներ՝ Ալլա Դալլաքյանն ու Հասմիկ Սարգսյանը ընդգրկվել են «МЕТОДОЛОГІЯ СУЧАСНИХ

НАУКОВИХ ДОСЛІДЖЕНЬ» խորագրով գիտագործնական կոնֆերանսի նյութերի տպագրման խնբագրական խորհրդում /Методологія сучасних наукових досліджень : збірник наукових праць за результатами XVI Міжнародної науково-практичної конференції, присвяченої 125-річчю заснування ХНПУ імені Г. С. Сковороди (14–15 листопада 2019 р., м. Харків) / за заг. ред. Ю. Д. Бойчука і К. А. Юр'євої — Харків : ХНПУ імені Г.С. Сковороди, 2019. — 232 с.

Հարկ է փաստել, որ միջազգային համագործակցության ուղղությամբ ֆակուլտետը դեռևս լուրջ անելիքներ ունի:

Վերլուծել հաշվետու տարում ֆակուլտետի արտաքին կապերին և միջազգայնացմանը նպաստող աշխատանքները, ֆակուլտետի տարեկան գործողությունների ծրագիրը, դրանց արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումները /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

(տեքստը այստեղ)

Ֆակուլտետի միջազգայնացմանը նպաստող աշխատանքներ.

1.Աշխատաշուկայում բարձր պահանջարկ ունեցող Տարրական մանկավարժություն և մեթոդիկա մագիստրոսի կրթական ծրագրի մշակում օտարերկրյա ուսանողների համար(Տես՝ ՀՊՄՀ տեղեկատվական հարթակ):

2.Համագործակցության շարունակում Ֆինլանդիայի Օուլու համալսարանի Կրթության ֆակուլտետի հետ՝ համատեղ կրթական ծրագիր ձեռնարկելու համար:

3.Համատեղ ցանցային կրթական ծրագրերի մշակում և դրա իրականացում Մինսկի Մաքսիմ Տանկի անվան պետական համալսարանի և Սանկտ-Պետերբուրգի պետական մանկավարժական համալսարանի հետ: Աշխատանքներն ավարտված են, սպասում ենք երկու գերատեսչությունների միջև համաձայնագրերի ստորագրմանը:

4.Մասնակցություն կրեդիտային շարժունության ծրագրերի:

Erasmus Plus ծրագրի շրջանակներում՝

- 2020 թ.՝ 1 ուսանող. Ֆինլանդիա, Օուլու համալսարան,

5. Մասնակցություն միջազգային գիտաժողովների (Տես՝ Սկզբնական կրթության ֆակուլտետի ամբիոնների հաշվետվություններ)

6. Հրապարակումներ միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում (Տես՝ սկզբնական կրթության ֆակուլտետի 2019 թվականի հաշվետվության 6-րդ չափանիշը. Հետազոտությունը և գիտության զարգացումը ֆակուլտետում):

7. Ուսանողների մասնակցությունը ՀՊՄՀ «Ամառային դպրոց» ծրագրին (տես՝ ՀՊՄՀ միջազգային համագործակցության բաժնի կայքէջ): /այս տարի քովիդով պայմանավորված չի իրականացվել/

8.«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» և «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրերը /մասնագիր և առարկայական նկարագրեր/ թարգմանվել են անգլերենով, ինչը թույլ կտա իրականացնել օտար լեզվով կրթություն ցանկացողների համար:

Նշված աշխատանքներին զուգահեռ՝ միջազգայնացման ուղղությամբ 2020 թվականին նախատեսվում են նաև հետևյալ աշխատանքները.

1. Համագործակցություն Ղազախստանի ազգային համալսարանի հետ հետևյալ ուղղություններով՝

- սովորողների ստեղծագործական աշխատանքների համատեղ ցուցադրություններ,
- ամենամյա ուսանողական միջազգային կոնֆերանսի կազմակերպում,
- ժամանակակից մանկավարժական մոտեցումների վերաբերյալ on line վեբինարի կազմակերպում:

2. Պայմանավորվածություններ ձեռք բերել մանկավարժական պրակտիկաների կազմակերպման ուղղությամբ (Մինսկի Մաքսիմ Տանկի անվան պետական համալսարան.տես՝ առցանց նամակագրությունն ու քննարկումները, դեկանի հաշվետվությունները):

X. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ներկայացնել և վերլուծել ֆակուլտետի որակի ապահովման ներքին համակարգի արդյունավետությունը:

(տեքստը այստեղ)

Կրթության որակի ապահովման ուղղությամբ աշխատանքները ֆակուլտետում և ամբիոններում իրականացվում են սկզբնական կրթության ֆակուլտետի և ամբիոնների գործողությունների՝ ՀՊՄՀ ռազմավարական ծրագրի հիման վրա մշակված գործողությունների պլանի համաձայն:

Ֆակուլտետի որակի ապահովման ընթացքում կիրառվում են հետևյալ մեխանիզմները.

- ինքնավերլուծությունը,
- հարցումները,
- ֆոկուս խմբերը:

Այս մեխանիզմները 2019-2020 ուսումնական տարում կիրառվել են մասնագիտական կրթական ծրագրերի, հետազոտության և գիտության զարգացման, դասավանդման որակի բարելավման նպատակով:

Կրթության որակի ապահովման ուղղությամբ աշխատանքները ֆակուլտետում և ամբիոններում իրականացվում են սկզբնական կրթության ֆակուլտետի և ամբիոնների գործողությունների՝ ՀՊՄՀ ռազմավարական ծրագրի հիման վրա մշակված պլանի համաձայն:

Մասնագիտական կրթական ծրագրերի վերանայման և մշտադիտարկման ֆակուլտետային հանձնաժողովի կողմից 2019-2020 ուսումնական տարում պարբերաբար վերանայվել են ֆակուլտետի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ուսումնական պլանները:

Ինքնավերլուծությունները նաև իրականացվում են կրթական ծրագրերի վերլուծության, մանկավարժական պրակտիկաների ընթացքի,արդյունքների, յուրաքանչյուր դասախոս իր պարապած առարկայի շրջանակներում: Իհարկե, այս տարի, պայմանավորված իրավիճակով, դասախոսների ինքավերլուծությունները դեռևս չեն քննարկվել, սակայն դրանց իրականացումը կնպաստի նաև դասավանդման որակի բարելավմանը: Ուստի այս ուղղությամբ մեր աշխատանքները պետք է կատարելագործվեն և միտված լինեն կրթության որակի շարունակական բարձրացմանը:

Ֆակուլտետի որակի ապահովման պատասխանատուների կողմից (Եվա Մնացականյան, Մելանյա Բարսեղյան, Մարիաննա Ամիրաղյան) ուսումնասիրվել են նոր սերնդի ՈԱԾ-ի պահանջները՝ առարկայական դասընթացների կոմպետենտային համակարգը ձևակերպելու նպատակով: ՈԱԾ-ի պահանջների հիման վրա փոփոխության են ենթարկվել նաև վերջնարդյունքների ձևակերպումները, համապատասխանեցվել են վերջնարդյունքներն ու ԱՈՒՄՓ-ի դասախոսությունների դասավադման և ուսումնառության մեթոդները՝ վերջնարդյունքները արդյունավետ ձևավորելու նպատակով:Ամբիոններում անկացվել են սեմինարներ նոր սերնդի ՈԱԾ-ի հետ ծանոթանալու նպատակով: Սեմինարներին մասնակցել են սկզբնական կրթության ֆակուլտետի երեք ամբիոնների դասախոսները: Սեմինարների ընթացքում քննարկվել են ֆակուլտետի կրթական ծրագրերի համապատասխանությունը ՈԱԾ-ի պահանջներին:

Կրթության որակի բարելավման համատեքստում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Իրականացվել է ինչպես կրթական ծրագրերի, այնպես էլ առարկաների բենչմարքինգ: Համեմատվել են ֆակուլտետի կրթական ծրագրերն ու առարկաները, որոնք դասավանդվում են դպրոցում,
- Համեմատվել և համապատասխանեցվել են մասնագիտության կրթական ելքային արդյունքներն ու որակավորումների ազգային շրջանակի բնութագրիչները:
- Բենչմարքինգի է ենթարկվել նաև մագիստրատուրայի հետազոտական բաղադրիչը: Ուսումնասիրվել է մագիստրատուրայում հետազոտական բաղադրիչի միջազգային փորձն ու իրականացվել են տեղայնացման աշխատանքներ /բարելավվել են առարկայական նկարագրերն ու դրանց վերջնարդյունքները և այլն:
- Իրականացվել է մասնագիտական կրթական ծրագրերի SWOT վերլուծություն, որից հետո մշակվել են մեխանիզմներ թույլ կողմերը նվազեցնելու և վտանգները կանխելու ուղղությամբ: Այդ մեխանիզմները համապատասխանեցվել են ֆակուլտետի ռազմավարական ծրագրի գործողությունների պլանին,
- Իրականացվել է «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության մագիստրոսական կրթական ծրագրի ամփոփիչ ատեստավորման SWOT վերլուծություն, արդյունքները քննարկվել են ֆակուլտետի խորհրդի նիստում,
- 2019-2020 ուստարվա վերջում ամփոփվել են ամբիոնների կողմից դասավանդվող առարկաների արդյունքները և որակի ապահովման խնդիրները: Այս համատեքստում վերանայվել են 2020-2021 ուստարվա առարկայական նկարագրերի վեջնարդյունքները, և կատարվել են որոշ փոփոխություններ՝ մասնավորապես մասնագրերի վերջնարդյունքներին համապատաս¬խանեցնելու ուղղությամբ/,
- Մինչև 2020 թ. մարտի 15-ը իրականացվել են փոխադարձ դասալսումներ և արդյունքների քննարկումներ,

- Ուսումնական առցանց գործընթացում ուսանողների ակտիվության և որակյալ կրթության դրդապատճառնության աճին նպաստելու համար նախատեսվել է անցկացնել հարցախույզ նրանց շրջանում հեռավար կրթության շուրջ կատարված աշխատանքների որակի, ուսանողների կարիքների վերհանման նպատակով,
- Ֆակուլտետում քննարկվել և ներդրվել է classroom էլեկտրոնային հարթակի արդյունավետ կիրառման և կիսամյակային գնահատման վերաբերյալ նոր մոտեցում, որոք թույլ են տալիս իրականացնել օբյեկտիվ գնահատում (Տես՝ ֆակուլտետի խորհրդի արձանագրություն):

Այս տարի ՀՊՄՀ-ն ընդունել է նոր կանոնակարգեր ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման, բովանդակության գնահատման և կառուցվածքին վերաբերյալ(Տես՝https://aspu.am/website/images/files/Bakalavr.pdf, https://aspu.am/website/images/files/Magistrosakan%20tez.pdf): Նշված կանոնակարգերի նախագծերը ֆակուլտետի ամբիոնների կողմից ենթարկվել է խորը ուսումնասիրության, կատարվել են դիտարկումներ, որոնց մեծ մասը հաշվի են առնվել փաստաթղթերի վերջնական տարբերակներում: Ֆակուլտետում շարունակվում են աշխատանքները կրթական ծրագրերի հետազոտական բաղադրիչի բարելավման ուղղությամբ: Փոփոխություններ են կատարվել հետազոտական խմբի առարկաների բովանդակության մեջ, ստեղծվել է մագիստրոսի աշխատանքային պլան գնահատման չափանիշներով: Համակարգում այդ մոդուլների էջերը կբացվեն և դասախոսները կգնահատեն միայն այն դեպքում, երբ ամբիոններում կքննարկվեն ուսանողների տվյալ կիսամյակում մագիստրոսական թեզերի շուրջ կատարված աշխատանքները, ուսանողի՝ քննարկումներին մասնակելու հանգամանքը: Քննարկումները կազմակերպվում են մուլտիմեդիոն լաբորատորիայում:

Ֆոկլտետը ակտիվ մասնակցել է նաև ԲԿԳՄ օրենքի և նախադպրոցական կրթության մասին օրենքի նախագծերի քննարկմանը:

Ֆակուլտետի ամբիոնների բոլոր դասախոսները ներգրավված են Google classroom էլեկտրոնային ուսումնական հարթակում: Նրանք մասնակցել են ՀՊՄՀ որակի ապահովման վարչության կողմից կազմակերպվող սեմիարներին, ծանոթացել են վարչության կայքում տեղ գտած փոփոխություններին, ուսանողների համար ստեղծված բաժնին: Հարթակում տեղադրված են ամբիոնների բոլոր առարկաների ԱՈՒՄՓ-ները:

Google classroom էլեկտրոնային ուսումնական հարթակում կատարվող աշխատանքների կազմակերպումն ու բովանդակային հարցերի մոնիթորինգն այս ուսումնական տարի ևս իրականացվել է ամբիոնների կողմից յուրաքանչյուր կիսամյակ: Էլեկտրոանյին հարթակում կատարված աշխատանքների արդյունավետության մասին հարցերը քննարկվել են ամբիոնների նիստերում, կատարվել են առաջարկություններ, որոնք միտված են են եղել որակի բարձրացմանը: (Տես՝ ամբիոնների վարչների զեկուցագրերը Google-docs էլեկտրոնային կրթական հարթակ):

Սակայն պետք է նշենք, որ այս ուղղությամբ դեռևս ունենք խնդիրներ: Այսօր դեռևս հարթակը դիտարկվում է որպես ուսանողին տեղեկատվություն փոխանցելու միջոց, այսինքն այն կարող ենք կարող ենք և պետք է օգտագործենք նաև որպես ուսումնական և գնահատման գործիք:

Այս ուսումնական տարում իրականացվել է մաթեմատիկա, մայրենի լեզու և նախադպրոցական մանկավարժություն առարկաների մնացորդային գիտելիքների ստուգում: Արդյունքները քննարկվել են ամբիոններում, արվել են առաջարկություններ արդյունքները բարելավելու նպատակով, ուսանողի կայուն մասնագիտական գիտելիքների և կարողությունների շրջանակը նախագծելու և ֆիքսելու նպատակով (Տես՝ ֆակուլտետի խորհրդի նիստի թիվ 5, թիվ 7 արձանագրությունները, ամբիոնների վարիչների հաշվետվությունները արդյունքների վերաբերյալ): Մնացորդային գիտելիքների ստուգումն իրականացվելու է ֆակուլտետում պարբերաբար և դա մենք կարող ենք համարել կրթության որակի ապահովման գնահատման համակարգի ներդրման փորձ, որի վերլուծության միջոցով մենք բարելավելու ենք դասավանդման որակը ֆակուլտետում:

Դասախոսներին և ուսանողներին հետաքրքրող տարաբնույթ տեսական և մեթոդական հարցերի շուրջ կազմակերպվել են գիտամեթոդական սեմինարներ և քննարկումներ (Տես՝ խմբային քննարկումների ժամանակացույցերն ու սեմինարների ներկայաթերթիկները):

Այդուհանդերձ կրթության որակի բարձրացման հարցերը մնում են մեզ համար օրակարգային:

Գաղտնիք չէ, որ մանկավարժի մասնագիտությունն ընտրում են համեմատաբար ցածր պատրաստվածություն ունեցող, ինչպես նաև քիչ մոտիվացված դիմորդները, ինչն, անշուշտ, դժվարացնում է մասնագետի պատրաստման մեր գործը: Խնդիր ունենք խթանելու, խրախուսելու մեր ուսանողների ինքնուրույն աշխատելու ունակությունները, ինչպես նաև վերլուծելու և սեփական կարծիքը հայտնելու կարողությունները, քանի որ նրանց խոսքն առավելապես նկարագրական է:

Այս տեսակետից՝

- Ֆակուլտետում կրթության որակի ապահովման համատեքստում ակտուալ են մնում ֆոկուս խմբերի կազմակերպումը/աշխատաշուկայի ներկայացուցիչների ներգրավմամբ/՝ ինչպես կրթական

ծրագրերի բարելավման, այնպես էլ այլ աշխատանքների իրականացման ընթացքում,

- վերանայման և միմյանց հետ շաղկապման կարիք ունեն հետազոտություններին միտված դասընթացները և աշխատանքները (ռեֆերատ, կուրսային աշխատանք, մանկավարժական պրակտիկա, ավարտական թեզ), դասընթացների բովանդակային միջուկը և վերջնարդյունքները,
- դեռևս խնդրահարույց է սովորողների գնահատման համակարգը. քննությունների և միջանկյալ ստուգման հարցաշարերում գլխավորապես վերարտադրողական բնույթի հարցեր ու առաջադրաքներ են: Մինչդեռ բազմիցս առաջարկվել է ամբիոններին մտածել և յուրաքանչյուր առարկայի համատեքստում հնարավորինս ստեղծագործական բնույթի, անհատական աշխատանք պահանջող առաջադրանքներ ներմուծել: Ինչը կբացառի նաև արտագրությունների խնդիրը, որի հետ մենք պարբերաբար բախվում են

Որակի ապահովման համատեքստում ֆակուլտետը գրանցել է հետևյալ առավելությունները.

- Ամբիոնների հետևողական աշխատանքը որակի պահպանման, որակի չափանիշների մշակման ուղղությամբ, դրանց համապատասխանեցումը ռազմավարական ծրագրի գործողությունների պլանին,
- որակի ապահովմանն ուղղված միջոցառումների կազմակերպումը ֆակուլտետում՝ կոնֆերանսներ, սեմինարներ, քննարկումներ և այլն,
- առաջավոր մանկավարաժական փորձի ուսումնասիրության և դրա ներդրման լայն հնարավորություններ,
- ամբիոնների դասախոսական անձնակազմի կոմպետենտությունը,
- ուսումնամեթոդական փաթեթների առկայությունը,
- մշակված գնահատման բաղադրիչների, չափանիշների առկայությունը,
- համագործակցությունը համալսարանի բոլոր այն ստորաբաժանումների հետ, որոնց աշխատանքը միտված է կրթության որակի բարելավմանը՝ որակի վարչություն, գիտահետազոտական կենտրոն և այլն:

Այդուհանդերձ կրթության որակի բարձրացման հարցերը մնում են մեզ համար օրակարգային:

Հաշվետու տարում իրականացված աշխատանքների շարքում են եղել հետևյալ աշխատանքները.

1. Ամբիոնների որակի պատասխանատուների կողմից առցանց ուսուցման պայմաններում որակի ուղղությամբ տարվող աշխատանքների ակտիվացում:
2. Ամբիոնի վարիչների և որակի պատասխանատուների կողմից դասալսումների կազմակերպում:
3. Ամբիոնների կողմից առցանց ուսուցման պայմաններում առարկաների դասավանդման դրվածքի ուսումնասիրություն և քննարկում:
4. Գնահատման գործիքակազմի ուսումնասիրություն՝ վերջնարդյունքների համապատասխանության համատեքստում:
5. Դասախոսների կողմից մեկ առարկայի ինքնավերլուծության իրականացում: Այս աշխատանքը պետք է կատարվի յուրաքանչյուր կիսամյակի վերջում:
6. Դասախոսների կողմից հարցաթերթիկների կազմում և առարկայի դասավանդման մասին ուսանողների շրջանում հարցումների իրականացում /կիսամյակի ավարտին/:

Ներկայացնել որակի ներքին ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը:

(տեքստը այստեղ)

Կրթության որակի ապահովման գործընթացների արտաքին և ներքին շահակիցների ներգրավվածությունը ապահովվում է ֆակուլտետի խորհրդի կազմում նրանց առաջադրմամբ, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմում նրանց ներգրավվածությամբ և մասնակցությամբ, սեմինարների, տարաբնույթ քննարկումների և ֆոկուս խմբերի աշխատանքներում մասնակցությամբ, որոնց ընթացքում քննարկվում են կրթական ծրագրի բովանդակությունը, վերջնարդյունքները, ձեռք բերումներն ու դժվարությունները (Տես՝ քննարկումների օրակարգեր, ներկայաթերթիկներ):

Հաշվետու ժամանակաշրջանում նմանատիպ քննարկումներ են իրականցվել ֆակուլտետի դասախոսների, ուսանողների և գործատուների շրջանում: Ֆակուլտետի ընդլայնված խորհրդի նիստերում պարբերաբար քննարկվում են կրթության որակի ապահովման հարցերը, վեր են հանվում կարիքները, նախանշվում դրանց բավարարման ուղիները: